



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

28 փետրվարի 2018 թվականի N 53-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՂՎԱՐԴԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՈՂԻ  
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25-Ն հրամանի N 1 հավելվածի՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Եղվարդի սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը կից հասարակական հիմունքներով գործող սոցիալական համագործակցության համակարգող խորհրդի անհատական կազմը.

1) Գեղամ Հայրապետյան - անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

2) **Վաղարշակ Մարգարյան** - անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Եղվարդի սոցիալական աջակցության տարածքային գործակալության առաջատար մասնագետ,

3) **Մեյրան Կոնդյան** - անդամ - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Եղվարդի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ,

4) **Դավիթ Սարգսյան** - անդամ - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «Քբաղվածության պետական ծառայություն» զորձակալության Եղվարդի զբաղվածության տարածքային կենտրոնի գլխավոր մասնագետ,

5) *Ողակ Համբարձումյան* - անդամ - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Արագածոտնի մարզի բժշկասոցիալական վիրհաբննական հանձնաժողովի բուժվիճակագիր,

6) Գալանե Արմենակյան - անդամ - Եղվարդի քաղաքապետարանի ներկայացուցիչ,

7) **Վարդան Քալանթարյան** - անդամ - «Պետական հիմնարկների աշխատողների»  
արհմիության Նախրիի տարածքային միության նախագահ,

8) **Վիկորյա Հովհաննիսյան** - անդամ - «Ազրոարդյունաբերական համակարգի  
աշխատողների» արհեստակցական կազմակերպությունների Նախրիի տարածքային միության  
նախագահ,

9) **Միրարիի Մանյան** - անդամ - «Եղվարդ» երիտասարդական, բնապահպանական,  
հասարակական կազմակերպության նախագահ,

10) **Հերմինե Գևորգյան** - անդամ - Եղվարդ համայնքի բնակիչ,

11) **Մարիամ Գևարյան** - անդամ - Եղվարդ համայնքի բնակիչ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2018 թվականի փետրվարի 28  
թ. Հրազդան

